№ 157 Սեպտեմբերի 9 (21) 1880 Սեպտեմբերի 9 (21) № 157

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Ստորագրողացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“.

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թատրոնի նշանակութիւն: — Ներքին տեսութիւն: Նամակ Աղէքսանդրապոլից: Նամակ Մոսկվայից: Նամակ Վաղարշապատից: Ներքին լուրեր:— Արտաքին տեսութիւն: Հայաստան: Պետութիւնների դրութիւնը: Թիւրքիա:— «Մշակի» հեռագիրներ:—Ցայտարարութիւններ:

ԹԱՏՐՈՆԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Մեզանում դեռ ևս չէ որոշված ինչ բան է թատրոնը, ինչ բան է բեմը: Մեզանում այնպիսի գաղափար է կազմված, որ թատրոնը շռայլութիւն է կամ զուարճութիւն է:

Այն ինչ, եթէ թատրոնը նոյնքան բարոյական պահանջ է, մտաւոր կարիք է հասարակութեան համար, որքան գպրոցը, գրականութիւնը, մամուլը, եթէ թատրոնը, ասում ենք, նոյնքան կրթողական ազդեցութիւն պէտք է ունենայ հասարակութեան վրա, որքան գրքի կարդալը,— այն ժամանակ թատրոնը երկու յատկութիւններ պէտք է ունենայ, անշուշտ:

Մէկը՝ որ բեմը պէտք է ներկայացնի հասարակութեանը այնպիսի երևոյթներ, որոնք նոյն իսկ հասարակութեան կեանքից կամ նրան նման կեանքի շրջանից վերցրած լինեն, պէտք է նրա համար մատչելի, հասկանալի լինեն, իսկ երկրորդը, թատրոնի մտաքը պէտք է էժան լինի, որպէս զի հասարակութիւնը ընտրեանայ այն մտքին, թէ թատրոնը կարիք է և ոչ թէ շռայլութիւն....

Կեանքի անհրաժեշտ կարիքը, օրինակ նիւթական կարիքը, հագուստը, ընակարանը, կերակուրը,—պէտք է էժան լինեն, որպէս զի կարիք լինեն և ոչ թէ անմատչելի շռայլութիւն: Նոյնպէս և կեանքի մտաւոր կարիքը՝ գպրոցը, գիրքը, լրագիրը, թատրոնը այն ժամանակ միայն կարիք են դառնում, երբ իրանց գներով մատչելի են ամենքին:

Գրականութիւնը, կամ մամուլը, երբէք չեն տարածվի ամբոխի մէջ, եթէ գիրքը կամ լրագիրը թանգ, իրանց գներով անմատչելի կը լինեն մեծամասնութեան համար: Գիրքը և լրագիրը այդ դրութեան մէջ միշտ շռայլութիւն կը մնան:

Նոյնպէս և թատրոնը երբէք կենսական կարիք չի դառնայ, մինչև որ իր մուտքի գներով մեծամասնութեանը միշտ անմատչելի, միշտ թանգ կը լինի: Այդ դրութեան մէջ թատրոնը միշտ կը մնայ մի աւելորդ բան, մի շռայլութիւն:

Բայց աւելի էլ շռայլութիւն կը համարվի թատրոնը, եթէ բացի իր մուտքի գներով թանգ, անմատչելի լինելուց հասարակութեան մեծամասնութեան համար, նա անդադար կառաջարկի ոչ թէ այն ժողովրդի կեանքից վերցրած երևոյթներ, որի համար ներկայացվում է, կամ նրան նման կեանքից, այլ իր նիւթերը կը վեր առնի հասարակութեան համար խորթ, անհասկանալի, անմատչելի, օտար, նրա կեանքի հետ ոչինչ կապ, ոչինչ նմանութիւն չունեցող հասարակութեան կեանքից և ընդհանրից:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

31 օգոստոսի

Անցեալ տարի մի քանի եռանդոտ երիտասարդներ պատրաստեցին կանոնադրութիւն, կամենում էին մի հասարակական հիմնարկութիւն հաստատել Աղէքսանդրապոլի մէջ—այն է գործակատարների կլուբ: Այդ հիմնարկութիւնը կարող էր փոքրի շատէ կենդանութիւն տալ մեր թմրած հասարակութեանը, մանաւանդ երիտասարդ դասին, բանալով նրա թարմ ոյժերի առջև կրթութեան մի նոր ասպարէզ: Բայց ցաւոք սրտի պէտք է խոստովանել, որ նրանց անխոհեմ վարմունքը արգելաբերեց եղաւ այդ բարի ցանկութեան իրագործմանը, երբ չափազանցութեան հասցրին վերև փչված կանոնադրութեան մի քանի յօդուածները: Մենք առհասարակ չենք սիրում յաջորդաբար վարվել, մենք սիրում ենք չափազանցութիւն, մենք սիրում ենք մեր ձեռնարկած գործին միանգամից տալ այնպիսի մի կազմակերպութիւն և կատարելութիւն, որ այդ գործը իր ընթացքում այլ ևս կարօտութիւն չունենայ կանոնադրութեան և մինչև անգամ աննշան փոփոխութեան: Բայց մենք չենք ուզում հասկանալ այն ճշմարտութիւնը, որ ամէն մի գործ, ամէն մի ձեռնարկութիւն կարող է միայն այն ժամանակ հասնել ցանկացած կատարելութեան, երբ մենք կը սկսենք նրան փոքրից և յաջորդաբար: Բոլորովին զուրկ ենք հասարակական կեանքից, և միանգամայն դատապարտված ենք մշտատոր և բարոյական անշարժութեան: Եւ իւրաքանչիւրը մեզանից, փոքր ի շատէ զարգացածը, հաղար անգամ անիծում է այն օրը, որ բաղդը դատապարտեց նրան այդ քաղաքում ծնված լինել, այնտեղ ստանալ իր սկզբնական կրթութիւնը, այնտեղ պատրաստել իր երիտասարդական օրերի զերեզմանը.... Այստեղ երիտասարդութիւնը չէ գտնում այն շրջանները, որոնք կարելի է տեսնել ամէն մի փոքր ի շատէ բարեկարգված, զարգացած քաղաքում: Այստեղ նա բոլորովին զրկված է հասարակական կեանքից, հասարակական շարժումից և վարում է մի տեսակ առանձնացած կեանք, անցկացնելով ամբողջ օրեր, ամիսներ և տարիներ իր տան չորս պատերի կամ խանութի մէջ: Այդ էր պատճառը որ մի քանի երիտասարդներ ցանկացան հիմնել մի ժողովրդարան *) «գործակատարների կլուբ» անունով, որ կարողանան նրանք գիշերները խմվել, խոսել, լրագրներ կարդալ և հասարակական հարցերով զբաղվել:— Բայց դժբաղդաբար, ինչպէս վերև ցուցեցի, հիմնադիրների անխոհեմ վարմունքը արգելաբերեց դարձ բարի նպատակի իրագործմանը:

Այժմ մտածում են հիմնել մի այլ հասարակական հիմնարկութիւն, այն է՝ մատենադարան կից ընթերցարանով: Ցանկալի կը լինէր, որ ցրեալ երիտասարդները առաջվանների պէս անխոհեմ ընթացք չը բռնեն և ընդհանրն այնպիսի առաջնորդներ, որք կարողանային իրագործել այդ օգուտաւէտ միաքը, որովհետև մեր քաղաքում շատ զգալի է դարձել ընթերցանութեան պահանջը: Ուրեմն պէտք է ուշադիր լինենք